ՍԵՆ ԱՐԵՎՇԱՏՅԱՆ

Կյանքից հեռացավ անվանի հայագետ, ակադեմիկոս Սեն Սուրենի Արևշատյանը:

Ս. Արևշատյանը Մաշտոցի անվան Մատենադարանի՝ իբրև գիտահետազոտական ինստիտուտի ձևավորման առաջին իսկ օրից աշխատանքի անցավ այնտեղ՝ գբաղեցնելով տարբեր պաշտոններ և հիմնադիր տնօրենից՝ ակադեմիկոս Լևոն Խաչիկյանից հետո քառորդ դար ղեկավարելով այն: Վերջին տարիներին Մատենադարանի կառավարման խորհրդի նախագահն էր, տնօրենի գլխավոր խորհրդականը:

Լևոն Խաչիկյանի և մյուս համախոհների հետ նա Մատենադարանը սկզբնավորողներից և կերտողներից էր: Նրանք են համալրել այն գիտական կադրերով՝ ուղենշել և հունավորել նրա ապագան: Այդ ստեղծարար աշխատանքի շնորհիվ օր օրի աճել է Մատենադարանի հեղինակությունը հայրենիքում և ի սփյուռս աշխարհի: Մատենադարանը դարձել է Մայր հայրենիքի ոչ միայն խորհրդանիշը, այլև հավերժության առհավատչյան:

Անգամ տասնամյակների դաժան փորձությունների ընթացքում Սեն Արևշատյանը կարողացել է անխաթար և անկորուստ պահել Մատենադարանի ներքին կառույցը, հարստացնել նրա հավաքածուները (միայն ձեռագրական հավաքածուն համալրվել է 1500-ից ավելի մատյաններով):

Սեն Արևշատյանը բարոյական բացառիկ նկարագրի տեր մարդ էր: Մինչև կյանքի վերջին օրերը զբաղված էր ակտիվ գիտական և հասարակական կյանքով, մանկավարժական գործունեությամբ, իր կարևոր նպաստն էր բերում ՀՀ - գիտությունների ազգային ակադեմիայի աշխատանքներին: Իր գիտական գործունեության ընթացքում հեղինակել է 150-ից ավելի գիտական աշխատություններ, այդ թվում շուրջ 30 մենագրություններ, որոնք լույս են տեսել Երևանում և արտերկրի հեղինակավոր հանդեսներում և պարբերականներում:

Ս. Արևշատյանի գիտական վաստակի կարևորագույն մասը հայ փիլիսոփայության պատմության և առհասարակ հայ հին և միջնադարյան հոգևոր մշակույթի պատմության աղբյուրագիտական հիմքի ամրապնդումն ու հարստացումն էր:

Նրա գիտական գործունեության մեջ համատեղվում էին պատմաբանը և մշակութաբանը, ազգագրագետն ու հնագետը, լեզվաբանն ու բանասերը: Սեն Արևշատյանը լավագույնս մարմնավորում էր այս իմացություններն ու հմտությունները:

Սեն Արևշատյանին բնորոշ էր գիտական ընդգրկուն աշխարհայացքը՝ խարսխված իր հանրագիտական իմացությունների վրա:

Սեն Արևշատյանի գործերի մի զգալի մասը վերբերվում է անտիկ շրջանից քրիստոնեականին անցմանը՝ V–VII դարերին, երբ դեռևս ուժեղ էին անտիկ ավանդները, գեղագիտական համակարգը, որոնց գումարվել էին նաև քրիստոնեական աշխարհայացքը և եկեղեցական դիրքորոշումը: Իր ուսումնասիրություններով նա ամբողջացրեց և պարբերացրեց հայ փիլիսոփայական մտքի պատմության ընթացքը՝ Դավիթ Անհաղթից մինչև Գրիգոր Տաթևացի և այլք: Այս տեսանկյունից դասական օրինակ է Դավիթ Անհաղթի գործերի նրա համակողմանի ուսումնասիրությունը:

Մեծ է Ս. Արևշատյանի վաստակը Դավիթ Անհաղթի փիլիսոփայական ժառանգության ուսումնասիրման և նրա միջազգային ճանաչման գործում: 1960–1980 թթ. հրատարակել է Դավիթ Անհաղթի երեք աշխատությունների քննական բնագրերը՝ ռուսերեն զուգահեռ թարգմանությամբ, առաջաբանով և ծանոթագրություններով: Ս. Արևշատյանը կազմել ու աշխարհաբար թարգմանությամբ հրատարակել է նաև Դավիթ Անհաղթի երկերի հատորը: Նրա առաջաբանով և ծանոթագրություններով 1975 թ. Մոսկվայում «Փիլիսոփայական ժառանգություն» մատենաշարով ռուսերեն լույս տեսավ հայ մտածողի երկերը: Դավիթ Անհաղթի ծննդյան 1500-ամյա հոբելյանի օրերին այն ունեցավ նաև երկրորդ հրատարակությունը: Վերջապես, հոբելյանի առթիվ Ս. Արևշատյանը պատրաստել, ծանոթագրել և ծավալուն առաջաբանով հրատարակել է Դավիթ Անհաղթի փիլիսոփայական չորս երկերի ժողովածուն: Հնարավոր չէր լինի առանց Ս. Արևշատյանի ավելի քան քսանամյա նախապատրաստական տքնաջան աշխատանքի իրագործել Դավիթ Անհաղթի ծննդյան 1500-ամյա հոբելյանի տոնակատարությունը և այն էլ այդպիսի ծավալով ու միջազգային հնչեղությամբ: Դավիթ Անհաղթի «Սահմանք իմաստասիրութեան» երկի Ս. Արևշատյանի կազմած գրաբար քննական բնագիրը դարձել է դասական տեքստ այդ երկի օտարազգի թարգմանիչների ու ուսումնասիրողների համար:

Ակադեմիկոս Սեն Արևշատյանը մի շարք միջազգային ակադեմիաների անդամ էր, ՀԽՍՀ պետական մրցանակի դափնեկիր (1978 թ.), պարգևատրվել է շքանշաններով և մեդալներով (2004 թ. պարգևատրվել է Հայ առաքելական եկեղեցու «Սուրբ Սահակ-սուրբ Մեսրոպ» շքանշանով, 2010 թ.՝ «Հայրենիքին մատուցած բացառիկ ծառայությունների համար» առաջին աստիճանի մեդալով):

Սեն Արևշատյանի հիշատակը միշտ վառ կմնա նրան ճանաչողների սրտերում, և նրա գիտական ժառանգությունը միշտ իր մնայուն տեղը կունենա հիմնարար հայագիտության մեջ՝ նպաստելով նրա զարգացմանը:

ՀՀ ԳԱԱ նախագահություն
Մաշտոցի անվան Մատենադարանի տնօրինություն